ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄԸ

Թոխաթյան Կ. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)
karen.tokhatyan@gmail.com

Բանալի բառեր՝ ժայռապատկեր, քարտեզ, լեռնաշխարհ, մշակութային ժառանգություն, պատմություն:

1. Ժայռապատկերը պատմական սկզբնաղբյուր է, որը պատկերագրորեն արտացոլում է անցյալը: Այն շատ արժեքավոր է հայ ժողովրդի և Հայկական լեռնաշխարհի Ք. ա. VI-II հազ. պատմական իրականության վերհանման, ծագումնաբանության ու ժողովրդագրական խնդիրներում: Դրանց քանակությունը, ոճի և տեսականու հարստությունը վկայում է պատմամշակութային ժառանգության այս կարևոր ոլորտում մեր նախնիների նշանակալի ավանդը:

2. Ուղղակի ուսումնասիրմանը մատչելի տարածքում (ՀՀ և Արցախ) 1998 թվականից կիրառել եմ արբանյակային տեղորոշման համակարգերով հուշարձանների դիրքանշումը: Կառուցվել է ՀՀ և Արցախի քարտեզ-շտեմարան, որը պարունակում է 60 հնավայր՝ Գեղամա, Սյունյաց, Արցախի լեռներում և Ոսկեհատում, մոտ 4000 ժայռապատկերով: 2-3 մ ճշգրտությամբ համալիր քարտեզը թույլ է տալիս ժայռապատկերները դիտել իրենց միջավայրում՝ մոտակա բնական ու հնագույն օբյեկտների հետ մեկտեղ (լեռ, լիճ, քարանձավ, աղբյուր, բնակատեղի, ճանապարհ, խաչմերուկ, ամրոց, միջնադարյան կառույց և այլն): Հնարավորություն կա նաև տեսնել ժայռապատկերներն ըստ տեսականու և ստեղծման ժամանակի:

3. Հետզհետե քարտեզն ընդգրկեց նաև Հայկական լեռնաշխարհն ու հարակից շրջանները՝ Փոքր Ասիա, Արևելյան Միջերկրածովք, Միջագետք, Իրան և Կովկաս: Այսօր այն պարունակում է 4000 կետ, այդ

թվում տարածաշրջանի հնագիտական հանրահայտ 300 և ժայռապատկերային 110 հնավայր, 10-50մ ճշգրտությամբ: Հին քարտեզների տվյալների ներառումը տեսանելի է դարձնում Մեծ Հայքի տեղանունների փոխոխման ու աղավաղման ընթացքը:

4. Աշխարհի ժայռապատկերներն ընդգրկող ամբողջական քարտեզ առայժմ գոյություն չունի: Ժայռարվեստն ուսումնասիրող մի շարք կազմակերպություններ կազմել են տեղական առավել հայտնի պատկերախմբերի քարտեզները, որոնք իրարից տարբերվում են տեսակով, ճշգրտությամբ և ձևավորմամբ (օրինակ՝ Իտալիայի, Կալիֆորնիայի, Շվեդիայի, Բադախշանի հնավայրերը, Ֆրանսիայի հարավի անձավապատկերները): Դրանց տվյալներն ի մի բերելով՝ կառուցել եմ մեկ միասնական էլեկտրոնային քարտեզ: Արդիական մեթոդներով արված ժայռապատկերների բաշխման քարտեզը ներկայացվում է առաջին անգամ: Այն պարունակում է մոտ 7000 կետ, այդ թվում՝ 2000 բնակավայր, 1000 լեռ ու ջրանուն, 300 խաչմերուկ, 300 հնավայր: Ներառում է աշխարհի 800 ժայռապատկերային հնավայր: Տեղեկություններն ըստ առկա հրապարակումների ու համացանցի են, ճշգրտված են «Մեգալիթ պորտալ» և «Գուգլ քարտեզ» և այլ շտեմարաններով:

5. Քարտեզն առավել ակնառու է դարձնում այն, որ Հայկական լեռնաշխարհում առկա է ժայռապատկերների գերկենտրոնացում՝ մեծ քանակության, թեմատիկայի ու տեսականու հարստության առումով, մինչդեռ նրա մերձակայքում հնագույն ժայռապատկերները քիչ են: Լեռնաշխարհը ժայռափորագրման հնագույն օջախ է, որտեղ հարատևած ու պահպանված ժայռապատկերման իմաստաբանությունը, ավանդույթներն ու հմտությունները Լեռնաշխարհից դուրս դրսևորում են ճառագայթաձև ու կենտրոնախույս բաշխում, այսինքն՝ էթնոմշակութային ալիքների ու

ազդակների ձևով աշխարհընկալումային պատկերացումների սփռումը Հին աշխարհում կայացել է նաև ժայռագրության միջոցով և տեսքով:

Ժայռապատկերումը հայոց դեպքում բնածին է և առաջնային, եղել է հային բնորոշ, հարազատ ու ավանդական: Ակնհայտ է, որ Հայոց աշխարհի ժայռապատկերները երկնել է բազմահազարամյա, բնիկ, նստակյաց, մեկ միասնական էթնոս՝ հայերը:

THE MAPPING OF PETROGLYPHS OF THE ARMENIAN HIGHLAND

Tokhatyan K. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of History, Armenia)